ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԴՐԵՑ ԱՆՀԱՅՏ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մայիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի գլխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի խումբ բարձրաստիճան հոգևորականներ ու միաբաններ ուղևորվեցին Երևանի Հաղթանակի զբոսայգի, որտեղ հոգևորականների հանդիսավոր թափորը շարժվեց դեպի Անհայտ զինվորի գերեզման՝ ծաղկեպսակ ու ծաղիկներ դնելով Անհայտ զինվորի շիրմին:

Հաղթանակի այս հանդիսավոր փոնի առիթով Վեհափառ Հայրապետն ասաց.

Այսօր Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրն է: Բայց նաև ազգային մեր կյանքում նշանավոր օր է: Այսօր Արցախ աշխարհում մեր ժողովրդի զավակները փոնախմբում են Շուշիի ազատագրության օրը, որը նաև հռչակված է որպես երկրի պաշտպանության բանակի օր: Մենք այս առիթով մեր աղոթքն ենք բարձրացնում, որպեսզի երբեք աշխարհը և մարդկությունը չտեսնեն պատերազմներ, ապրեն խաղաղության, սիրո համագործակցության մեջ, որպեսզի փառավորվի Տիրոջ անունը, և մարդիկ կարողանան իրենց արդար քրտինքի վաստակով երջանկանալ, ուրախանալ ու շենացնել իրենց կյանքն ու իրենց երկիրը: Մեր աղոթքն ու մաղթանքն է նաև, որ Աստծո զորավոր Աջը միշտ հովանավոր լինի հայոց բանակին, որը պաշտպանում է մեր երկրի սահմանները և Հայոց աշխարհի խաղաղությունը: Տիրոջ բարի հայացքը թող լինի մեզ հետ, մեր ժողովրդի զավակների հետ և պարգևի մեզ երջանիկ, խաղաղ կյանքի օրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ